ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» հունիսի 2015 թվական N 94–Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ՀՈՒՍՈ ԱՌԱԳԱՍՏ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Գյումրու քաղաքապետարանի «Հուսո առագաստ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության «Մաքուր էներգիա և ջուր ծրագիր»-ի կողմից Գյումրի քաղաքի Անի թաղամասի թիվ 27 («Հուսո Առագաստ») մանկապարտեզի ջերմամեկուսացման ծրագրին մասնակցություն ցուցաբերելու անհրաժեշտությունից, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով Գյումու քաղաքապետի և Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության «Մաքուր էներգիա և ջուր ծրագիր»-ի ղեկավարի միջև 2015 թվականի հունիսի 11-ին փոխադարձ պարտավորությունների վերաբերյալ կնքված համաձայնագիրը, ինչպես նաև «Հուսո առագաստ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի գրությունը՝ (քաղաքապետարանում մուտքագրված 2015 թվականի հունիսի 9-ին,Դ/6810 թվագրմամբ) **համայնքի ավագանին որոշում է.**

1. Գյումրու քաղաքապետարանի «Հուսո առագաստ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության «Մաքուր էներգիա և ջուր ծրագիր»-ի կողմից իրականացվող ջերմամեկուսացման և էներգախնայողության աշխատանքներին համայնքի կողմից մասնակցություն ցուցաբերելու նպատակով տրամադրել 2.500.000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Հանձնարարել Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսա-տնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 9/6/1 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

Կողմ (14) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ա.Ադամյան
Ա.Բաղրամյան
Ա.Գրիգորյան
Վ.Եդիգարյան
Հ.Խաչատրյան

Հ.Կարապետյան
Տ.Հովհաննիսյան
Վ. Հունանյան
Ն.Մեսրոպյան
Ռ.Մխիթարյան
Վ.Շիրինյան
Ե.Պողոսյան
Մ.Սահակյան
Տ. Փանոսյան

Ս. Բ Ա Լ Ա Ս Ա Ն Յ Ա Ն

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ԱՍԱՏՐՅԱՆ

15 հունիսի 2015թ.
ք.Գյումրի